ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

«ԶԼՄ-ՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ»

ծրագրի շրջանակում իրականացված
լրատվամիջոցների մշտադիտարկման

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

www.ypc.am
Երևան | մայիս-հոկտեմբեր, 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ 4

ՄԵԴԻԱՅԻ ԴԵՐԸ 6

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ 7

ՄՇՏԱԴԻՏԱՐԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 8

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԹՎԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 9

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ 11

ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ
ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ
2023թ. հոկտեմբերի 1-15 15

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԼՄ- ՆԵՐԻՆ 23

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ
ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 25

ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Հայաստանի անկախությունից՝ 1991 թվականից ի վեր, մարդկային, թերևս, աննախադեպ ներհոսքը երկիր լուրջ մարտահրավերներ է ստեղծել հայաստանյան հասարակության, հատկապես՝ ներգաղթյալների համար՝ ինտեգրվելու Հայաստանում, մաս կազմելու հանրապետության սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքին, հասկանալու իրավական համակարգը, քաջատեղյակ լինելու իրենց իրավունքներին, ուստի՝ կարողանալու պաշտպանել դրանք։

Թեև Արցախյան երկրորդ պատերազմի (2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր) հետևանքով գործ ունենք գերազանցապես նույն ազգության և մշակույթի ներկայացուցիչների՝ հայերի զանգվածային տեղաշարժի հետ, որոնք տեղահանվել են Արցախից, սակայն որոշակիորեն տարբերվող սոցիալական ու տեղեկատվական միջավայրը կարող է խոչընդոտել Հայաստանում նրանց լիարժեք ինտերգրմանը։

Արցախյան առաջին պատերազմի ժամանակ (1991-1994թթ) նույնպես Արցախից տեղահանվածները լուրջ դժվարությունների բախվեցին հայաստանյան հանրությունում ինտեգրվելու հարցում։ Ներկայում Հայաստանում հաստատված հազարավոր արցախցիների ինտեգրումն ավելի դժվար գործ է՝ հայաստանյան հանրության, պետական կառույցների շրջանում համապատասխան փորձի, գիտելիքի, գործիքակազմի, ընդհանուր առմամբ՝ ինտեգրման մշակույթի բացակայության պատճառով։ Ի հավելումն՝ արցախցիների զգալի հատված հաստատվել է Հայաստանի գյուղաբնակ վայրերում, որտեղ տեղեկատվության փոխանակումը բավականաչափ ինտենսիվ չէ, ինչն էլ լրացուցիչ բարդություններ է ստեղծում նրանց ինտեգրման համար։

Հայաստանյան նոր բնակիչների ինտեգրման ուղղությամբ պատշաճ աշխատանք չիրականացնելը ժամանակ անց կարող է հանգեցնել խնդիրների՝ թե՛ ընդունող հանրության, թե՛ ներգաղթյալների համար։ Օրինակները բազմաթիվ են, որոնց բախվել են այլ երկրներ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության (ԱՀ) դեմ Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմի հետևանքով բազմաթիվ արցախցիներ ստիպված էին լքել իրենց տները՝ անվտանգության ուղիղ սպառնալիքի ներքո:

ՀՀ-ում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի տվյալներով՝ 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ տարբեր մարզերում ժամանակավորապես ապաստանած, բռնի տեղահանված ԱՀ քաղաքացիների թիվը կազմում է շուրջ 20500 մարդ՝ 5300 ընտանիք (2022 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է շուրջ 21000 մարդ՝ 5400 ընտանիք):

Նշված թվաքանակի շուրջ 26%-ն ապրում է Երևան քաղաքում: Համեմատաբար խոշոր համայնքներ են ձևավորվել Արարատի, Սյունիքի, Կոտայքի և Արմավիրի և Գեղարքունիքի մարզերում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը տեղահանված արցախցիների աջակցության միջոցառումներ է նախաձեռնել, որոնք իրականացվել են ՀՀ-ում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի հետ սերտ համագործակցությամբ, ՀՀ ՏԻՄ-երի, ՔՀԿ-ների, բարեգործական նախաձեռնությունների, միջազգային մարդասիրական կազմակերպությունների ակտիվ աջակցությամբ:

Ամենամասշտաբային ծրագրերից են եղել

- Արցախի Հանրապետության դեմ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառված քաղաքացիների աջակցության միջոցառումը,
- Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման վեցամսյա սոցիալական աջակցության միջոցառումը,
- Պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական աջակցության տրամադրման ծրագիրը,
- Արցախի Հանրապետությունում հաշվառված և հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը պատերազմի պատճառած ավերածությունների հետևանքով կամ այլ պատճառներով կորցրած քաղաքացիների աջակցության միջոցառումը:

Բնակարանի ձեռք բերման հավաստագրեր

2022 թվականի հուլիսի 1-ից ՀՀ կառավարության կողմից ԱՀ առանձին շրջաններից տեղահանված քաղաքացիների համար գործարկվել է հիփոթեքային եղանակով՝

պետական աջակցությամբ տրվող հավաստագրերի միջոցով ՀՀ-ում բնակարաններ ձեռք բերելու ծրագիր։

2023թ. մարտի 1-ի դրությամբ՝ ծրագրի շրջանակում հավաստագիր է ստացել 3423 շահառու, որից շուրջ 300 շահառու ձեռք է բերել անշարժ գույք կամ հիփոթեքային վարկավորման գործընթացը գտնվում է ավարտական փուլում։

ԱՀ կառավարության հաստատված ծրագրով պետական աջակցությամբ համապատասխան հավաստագրերի միջոցով ՀՀ-ում բնակարան կարող են ձեռք բերել զոհված և անհայտ կորած զինծառայողների իրավահաջորդները (զոհը ՀՀ-ում հուղարկավորված և ընտանիքի՝ տեղահանված լինելու պարագայում)։ 2022 թվականի ընթացքում այդպիսի հավաստագրեր են ստացել 74 ընտանիքներ, որից 19-ն արդեն ավարտել է բնակարանի ձեռքբերման գործընթացը։

Հաջորդ ծրագիրը վերաբերում է հավաստագրի միջոցով արդեն ձեռք բերված բնակարանի կահավորմանը։ Նշված հավաստագրերից ստացել է ընդամենը 2 ընտանիք. այն առայժմ ՀՀ տարածքում հնարավոր չի եղել իրականացնել՝ մասնավոր հատվածի և համապատասխան պետական կառույցի միջև համագործակցության բացակայության պատճառով։

Աջակցության ծրագրերի ամբողջական ցանկը հասանելի է ՀՀ կառավարության պաշտոնական կայքում։

ՄԵԴԻԱՅԻ ԴԵՐԸ

Լրատվամիջոցները հանրային կարծիքի ձևավորման առաջատարն են, և Հայաստանի նոր բնակիչների ինտեգրման հարցում նրանք կարող են անփոխարինելի դեր կատարել՝ իրենց գործիքակազմի, ցանցի և ազդեցության միջոցով աջակցելով (կամ խոչընդոտելով) գործընթացին:

Լրատվամիջոցները կարող են՝

- օժանդակել նոր բնակիչներին՝ տեղեկանալու Հայաստանի քաղաքական, տնտեսական, իրավական համակարգերին, մշակութային կյանքին ու իրենց իրավունքներին, իսկ արցախցիների պարագայում՝ նաև պետական աջակցության ծրագրերին,
- հավասարակշռված ներկայացնելով նոր բնակիչների հետ կապված խնդիրները՝ չպատկերելով նրանց որպես օտար,
- Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում ներկայացնելով նրանց կարծիքը, դիրքորոշումը, շահը՝ նոր բնակիչներին դարձնելով հայաստանյան տեղեկատվության արտադրող, և այդպիսով նպաստելով նրանց ինտեգրմանը,
- ներկայացնելով նոր բնակիչների ներդրումը գործունեության տարբեր ոլորտներում,
- ինտեգրմանն առնչվող տարաբնույթ հարցերի վերաբերյալ իրականացնելով իրազեկման արշավներ (իրավունքների, հնարավորությունների, պատասխանատվության լուսաբանում)՝ ուղղված նոր բնակիչներին և/կամ հայաստանյան հանրությանը,
- ներգրավելով նոր բնակիչներին հայաստանյան մեդիա-համակարգ. օրինակ՝ պարզապես աշխատանքի ընդունելով նրանց:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ Երևանի մամուլի ակումբի իրականացրած սույն ծրագրի նպատակն է՝

ա. ամրապնդել մեդիայի կարողությունները՝ բավարարելու հանրության տարբեր հատվածների տեղեկատվական պահանջները,
բ. բարձրացնել նրա պատասխանատվության աստիճանը՝ նպաստելով Հայաստանի նոր բնակիչների ինտեգրմանը,
գ. հայաստանյան նոր բնակիչների շրջանում բարձրացնել տեղեկացվածության և մեդիագրագիտության աստիճանը՝ նպաստելով Հայաստանում նրանց ինտեգրմանը։

Այս ծրագրի շրջանակում իրականացված **լրատվամիջոցների մշտադիտարկումը** նպատակ է հետապնդել պարզելու, թե հայաստանյան առցանց մեդիայի ազդեցիկ ներկայացուցիչները որքանով են անդրադառնում նոր բնակիչների խնդիրներին, նրանց վերաբերող և/կամ նրանց կողմից բարձրացված հարցերին ու կառավարության, մասնավոր ու օտարերկրյա/միջազգային կառույցների՝ նրանց հասցեագրված նախաձեռնություններին։

Մշտադիտարկմանը զուգահեռ՝ **հարցումներ** են անցկացվել 2020թ. պատերազմի հետևանքով Հայաստանում հաստատված արցախցիների շրջանում՝ Երևանում, Արմավիրի ու Գեղարքունիքի մարզերում, որոնց նպատակն էր պարզել՝

- ✓ նրանց կարիքները,
- ✓ նոր բնակիչների ուղղությամբ պետական մարմինների աշխատանքի արդյունավետությունը,
- ✓ և արցախցիների գնահատականը՝ իրենց խնդիրներին, դիրքորոշմանը, շահերին հայաստանյան լրատվամիջոցների անդրադարձին (որքանով են հայաստանյան լրատվամիջոցները ժամանակին, բազմակողմանի անդրադառնում նոր բնակիչների հարցերին՝ ներկայացնելով նաև նրանց տեսակետը)։

ՄՇՏԱԴԻՏԱՐԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախապես առանձնացվել են հայաստանյան առցանց ութ լրատվամիջոցներ, որոնք, Երևանի մամուլի ակումբի գնահատմամբ, ներկայացնում են հայաստանյան տեղեկատվական դաշտի հիմնական թեմաները, պատումները։

1. «Առաջին լրատվական» [https://www.1in.am]
2. «Առավոտ» [https://www.aravot.am]
3. «Արմենպրես» [https://armenpress.am]
4. «Ժողովուրդ» [https://armlur.am]
5. «Հայկական ժամանակ» [https://www.armtimes.com]
6. «Հետք» [https://hetq.am]
7. «Հրապարակ» [https://hraparak.am]
8. «Голос Армении» [https://golosarmenii.am]

Ուսումնասիրության առարկան առցանց նյութն է, որը հրապարակվել է նշված լրատվամիջոցների կայքէջերում 2022թ. հոկտեմբերի 1-ից 2023թ. փետրվարի 28-ը՝ հինգ ամիս։

Մշտադիտարկման ընթացքում առանձնացվել են վերոհիշյալ ութ լրատվամիջոցներում եղած այն հրապարակումները, որոնք վերաբերում են հայաստանյան նոր բնակիչների
1. քաղաքական (ներքին, արտաքին),
2. սոցիալ-տնտեսական,
3. իրավական,
4. մշակութային խնդիրներին,
և այդ չորս ուղղություններով Հայաստանի կառավարության, մասնավոր ու օտարերկրյա/միջազգային կառույցների նախաձեռնություններին։

Ուշադրությունից դուրս են մնացել գովազդային հրապարակումները, առանց նկարագրության լուսանկարները։

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԹՎԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մշտադիտարկման արդյունքում ի հայտ է բերվել 54 հրապարակում, որոնց գերակշիռ մեծամասնությունը՝ 42-ը կամ ընդհանուրի 77.8%-ը վերաբերում են հայաստանյան նոր բնակիչների սոցիալ-տնտեսական խնդիրներին և Հայաստանի կառավարության իրականացրած աջակցության ծրագրերին (օրինակ, տեղահանված արցախցիների համար բնակարաններ գնելուն, ֆինանսական աջակցության տարատեսակ ծրագրերին և այլն)։ Երկրորդ հորիզոնականում իրավական հարցերին առնչվող հրապարակումներն են՝ 6 անդրադարձ կամ ընդհանուրի 11.1%-ը։ Քաղաքական թեմաներին վերաբերող հրապարակումների քանակը երրորդն է՝ 4 հրապարակում կամ ընդհանուրի 7.4%-ը։ Ցանկը եզրափակում են մշակութային անդրադարձները՝ 2 հրապարակում կամ ընդհանուրի 3.7%-ը։

Հաջորդ ուշագրավ հանգամանքը հրապարակումների ժամանակային հատվածներն են։ Այսպես, հրապարակումների գրեթե 2/3-ը կատարվել է 2022թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին։ Հետագա ամիսներին հրապարակումների թիվը նկատելիորեն սակավ է.
- 2022թ. հոկտեմբեր՝ 17 հրապարակում կամ ընդհանուրի 31.5%-ը,
- 2022թ. նոյեմբեր՝ 15 հրապարակում կամ ընդհանուրի 27.8%-ը,
- 2022թ. դեկտեմբեր՝ 9 հրապարակում կամ ընդհանուրի 16.6%-ը,
- 2023թ. հունվար՝ 6 հրապարակում կամ ընդհանուրի 11.1%-ը,
- 2023թ. փետրվար՝ 7 հրապարակում կամ ընդհանուրի 13%-ը։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2022թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հրապարակումների մեծաքանակ լինելը գլխավորապես պայմանավորված է տեղահանված արցախցիներին ցուցաբերվող պետական աջակցության ծրագրերի, դրանց ազդեցության մասին հրապարակումներով և այդ ծրագրերի արդյունավետության վերաբերյալ տարբեր կարծիքների ներկայացմամբ։

Եվ վերջապես, պակաս կարևոր չէ, թե լրատվամիջոցների ընդհանուր հրապարակումների մեջ հայաստանյան նոր բնակիչներին վերաբերող անդրադարձը քանի տոկոս է կազմել։ Մեր դիտարկման համաձայն՝ նշված ութ լրատվամիջոցները 2022թ. հոկտեմբեր - 2023թ. փետրվար ժամանակահատվածում յուրաքանչյուր ամիս ունեցել են միջինը մոտ 6 հազար առցանց հրապարակում։ Ուստի, ամսական գրեթե 11 հրապարակումը (սա դիտարկված ութ լրատվամիջոցների միջինացված թիվն է) 44-օրյա պատերազմից հետո Հայաստանում ապաստան գտած արցախցիների վերաբերյալ, նշանակում է, որ նոր բնակիչների խնդիրների լուսաբանումը կազմել է ընդհանուրի շուրջ 0.2%-ը։

Այս թվերը հատկապես ուշագրավ են, եթե նկատի ունենանք այս մշտադիտարկման հետ զուգահեռ՝ գրեթե նույն ժամանակահատվածում (2023թ. հունվար-մարտ)՝ Միջազգային հանրապետական ինստիտուտի (International Republican Institute) կողմից Հայաստանում անցկացված սոցհարցման տվյալները, ըստ որոնց՝ երկրի բնակչության համար ամենից

կարևոր խնդիրների ցանկում երկրորդ ու երրորդ հորիզոնականներում են գործազրկությունն ու աղքատությունը՝ Հայաստանի անվտանգությանը վերաբերող խնդիրներից հետո։ Գաղտնիք չէ, որ տեղահանված արցախցիները սոցիալ-տնտեսական առումով ամենից խոցելի խմբերի շարքում են։ Ուստի, հարց է առաջանում՝ հայաստանյան լրատվամիջոցների այդօրինակ՝ սահմանափակ անդրադարձը Արցախից տեղահանվածների խնդիրներին, որքանո՞վ է համահունչ հանրության առաջնահերթություններին։

Մշտադիտարկման թվային արդյունքներն ամփոփ տե՛ս ստորև՝ **Աղյուսակ 1**։

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Հասկանալի է հայաստանյան լրատվամիջոցների կողմից նոր բնակիչների առավելապես սոցիալ-տնտեսական խնդիրներին անդրադառնալը, քանի որ հայ-ադրբեջանական 2020թ. պատերազմից հետո Արցախից տեղահանվածներից գրեթե բոլորն ունեն տան ու սոցիալական բազմաթիվ այլ խնդիրներ, շատերը տակավին աշխատանք են փնտրում: Նման իրավիճակում թե՛ արցախցիների, թե՛ հանրության այս հատվածին վերաբերող կառավարության, մասնավոր ու օտարերկրյա/միջազգային կառույցների օրակարգի մի զգալի մասը պետք է, բնականաբար, կենտրոնացած լինի այդ ուղղությամբ, և սա իր արտացոլումն է գտնում հայաստանյան լրատվամիջոցների լուսաբանման մեջ: Այս ուղղությանը վերաբերող նյութերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝

- հակիրճ նորություններ պետական աջակցության որևէ ծրագրի մասին,
- արցախցի տեղահանվածների բողոքի (սոցիալ-տնտեսական հարցերով) ակցիաների լուսաբանում,
- մարդկային պատմություններ, որտեղ կարևոր հատվածներից է «հերոս(ներ)ի» սոցիալական ծանր դրության նկարագրությունը:

Սակայն մեր կողմից իրականացված հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ Հայաստանի հատկապես սահմանամերձ բնակավայրերում (Գեղարքունիքի մարզ) բնակություն հաստատած արցախցիներին պակաս չեն հետաքրքրում քաղաքական հարցերը՝ խաղաղության և պատերազմի հարցը Ադրբեջանի հետ, Արցախի հիմնախնդրի հետագան: Պատճառը միայն անվտանգային նկատառումները չէին: Կային մարդիկ, որոնք ցանկանում էին վերադառնալ Արցախ՝ այդ կերպ տեսնելով իրենց սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ճանապարհը: Նրանցից շատերի ներկայացմամբ՝ մինչև 2020թ. պատերազմը Արցախում իրենց կենսամակարդակն անհամեմատ բարձր էր, քան իրենք կկարողանան հասնել Հայաստանում՝ անգամ օգտվելով կառավարության և այլ կառույցների աջակցության ծրագրերից: Այս տեսանկյունից ակնհայտ է, որ հայաստանյան նոր բնակիչների բարձրացրած, նրանց առնչվող քաղաքական հարցերին հազվադեպ անդրադառնալը (հիշեցնենք՝ ընդհանուր լուսաբանման միայն 7.4%-ն է) չի արտացոլում արցախցիների կարիքները: Մեզ հետ զրույցում հենց նրանց խոսքն էր, թե 44-օրյա պատերազմից ամենից շատ տուժածը իրենք են *(«հարազատներից բացի, տուն-տեղ են կորցրել»*), բայց *«ոչ ոք չի գալիս հարցնում՝ ի՞նչ եք մտածում Արցախի հարցի մասին»*:

Հաջորդ դիտարկումը՝ հայաստանյան նոր բնակիչների մի զգալի հատված տակավին շարունակում է բախվել իրավական տարաբնույթ խնդիրների՝սկսած Արցախում կառուցած, սակայն այլևս ադրբեջանական վերահսկողության ներքո գտնվող տան համար վարկային պարտավորության շուրջ բանկի հետ դատական քաշքշուկներից, մինչև Հայաստանում աշխատանքի ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթեր հայթայթելը: Նման իրավիճակը շատ արցախցիների մեջ ստեղծել է զգացողություն, թե անհրաժեշտության դեպքում չեն կարողանա պաշտպանել անգամ իրենց հիմնարար իրավունքները: Հայաստանի նոր բնակիչների իրավական հարցերի լուսաբանումը նույնպես խիստ սահմանափակ է (ընդհանուրի 11.1%-ը), ինչը հանրության

ուշադրությունից մի զգալի մասով դուրս է թողնում արցախցիների առջև ծառացած նմանատիպ խնդիրները, իսկ նոր բնակիչներին զրկում է գոյություն ունեցող հնարավորությունների մասին պատշաճ կերպով տեղեկանալուց: Իրավական հարցերին վերաբերող գրեթե բոլոր հրապարակումները մարդկային պատմություններ են, որոնց «հերոս(ներ)ը» բախվել են ինչ-ինչ խնդիրների՝ պատերազմի ու գաղթի հետևանքով Արցախում կորսված փաստաթղթերի կամ այնտեղ մնացած սեփականության՝ ոչ պատշաճ փաստաթղթավորված լինելու պատճառով:

Եվ վերջապես, լուսաբանման շարունակականությունը: Անգամ հնգամսյա մշտադիարկումը ցույց տվեց, որ լրատվամիջոցներն արցախցիներին գերազանցապես անդրադառնում են որևէ առիթի պարագայում՝ 44-օրյա պատերազմի հերթական տարելից, կառավարության կողմից աջակցության նոր ծրագրի մեկնարկ/գործողի թարմացում, արցախցիների բողոքի ակցիաներ և այլն: Եթե մի կողմ թողնենք Արցախից տեղահանվածներին անդրադառնալու նման առիթները, ապա նոր բնակիչների վերաբերյալ հայաստանյան լրատվամիջոցների հրապարակումների առանց այդ էլ սուղ քանակը կկրճատվի գրեթե կիսով չափ: Մյուս կողմից, նման՝ «ընդմիջումներով» լուսաբանումն ամենևին չի նպաստում նոր բնակիչներին հուզող հարցերի շարունակական պահպանմանը հանրային օրակարգում: Մեր կողքին ապրող մարդկանց խնդիրները, դիրքորոշումները, իրավունքներն ու շահերը շարունակական են, ոչ թե գոյություն ունեն ժամանակ առ ժամանակ:

Աղյուսակ 1. Հայաստանի նոր բնակիչների (արցախցիների) լուսաբանման մշտադիտարկման արդյունքների աղյուսակ

№	Լրատվամիջոց	Անդրադարձ՝ ըստ ուղղությունների	Հոկ. / 2022թ.	Նոյ. / 2022թ.	Դեկ. / 2022թ.	Հուն. / 2023թ.	Փետ. / 2023թ.	Ընդամենը՝ ըստ ուղղությունների	Ընդամենը
1.	«Առաջին լրատվական»	*Քաղաքական*						0	2
		Սոցիալ-տնտեսական	2					2	
		Իրավական						0	
		Մշակութային						0	
		Ընդամենը՝ ըստ ամիսների	2	0	0	0	0		
2.	«Առավոտ»	*Քաղաքական*						0	7
		Սոցիալ-տնտեսական	4	1				5	
		Իրավական		2				2	
		Մշակութային						0	
		Ընդամենը՝ ըստ ամիսների	4	3	0	0	0		
3.	«Արմենպրես»	*Քաղաքական*		1				1	11
		Սոցիալ-տնտեսական	3	3	2		1	9	
		Իրավական	1					1	
		Մշակութային						0	
		Ընդամենը՝ ըստ ամիսների	4	4	2	0	1		
4.	«Ժողովուրդ»	*Քաղաքական*					1	1	10
		Սոցիալ-տնտեսական		4	2	1		7	
		Իրավական						0	
		Մշակութային	2					2	
		Ընդամենը՝ ըստ ամիսների	2	4	2	1	1		
5.	«Հայկական ժամանակ»	*Քաղաքական*						0	3
		Սոցիալ-տնտեսական	1		1		1	3	
		Իրավական						0	
		Մշակութային						0	
		Ընդամենը՝ ըստ ամիսների	1	0	1	0	1		
6.	«Հետք»	*Քաղաքական*						0	11
		Սոցիալ-տնտեսական	2		2	4	2	10	
		Իրավական	1					1	
		Մշակութային						0	
		Ընդամենը՝ ըստ ամիսների	3	0	2	4	2		
7.	«Հրապարակ»	*Քաղաքական*						0	2
		Սոցիալ-տնտեսական			1			1	
		Իրավական					1	1	
		Մշակութային						0	
		Ընդամենը՝ ըստ ամիսների	0	0	1	0	1		
8.	«Голос Армении»	*Քաղաքական*	1	1				2	8
		Սոցիալ-տնտեսական		3	1	1		5	
		Իրավական					1	1	

		Մշակութային						0	
		Ընդամենը՝ ըստ ամիսների	1	4	1	1	1		

Ութ լրատվամիջոցների ընդհանուր անդրադարձն՝ ըստ ուղղությունների

Քաղաքական	Սոցիալ-տնտեսական	Իրավական	Մշակութային
4	42	6	2

Ութ լրատվամիջոցների ընդհանուր անդրադարձն՝ ըստ ամիսների

Հոկտեմբեր 2022թ.	Նոյեմբեր 2022թ.	Դեկտեմբեր 2022թ.	Հունվար 2023թ.	Փետրվար 2023թ.
17	**15**	**9**	**6**	**7**

Ընդհանուր անդրադարձ	54

ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ
2023թ. հոկտեմբերի 1-15

Երևանի մանուլի ակումբը Արցախի բնակչության բռնի տեղահանման պատճառով Հայաստանի Հանրապետությունում ստեղծված արտակարգ իրավիճակի օրերին որոշեց շարունակել հայաստանյան մի շարք ազդեցիկ **լրատվամիջոցների մշտադիտարկումը,** նպատակ ունենալով պարզել, թե հայաստանյան հեռուստաընկերությունները և առցանց մեդիայի ներկայացուցիչներն ինչպիսի ինտենսիվությամբ ու խորությամբ են անդրադառնում բռնի տեղահանվածների խնդիրներին:

Նախապես առանձնացվել են հայաստանյան մի շարք լրատվամիջոցներ, որոնք, Երևանի մամուլի ակումբի գնահատմամբ, ներկայացնում են հայաստանյան տեղեկատվական դաշտի հիմնական թեմաները:

1. **Հայաստանի հանրային հեռուստատեսություն**
2. **Հայկական երկրորդ հեռուստալիք**
3. **«Արմենիա» հեռուստաընկերություն**
4. **«Երկիր Մեդիա» հեռուստաընկերություն**
5. **«ՍիվիլՆեթ» [https://www.civilnet.am]**
6. **«Ֆակտոր տեղեկատվական կենտրոն» [https://www.factor.am]**
7. **«A1+» [https://a1plus.am]**
8. **«ԳալաTV» [https://www.galatv.am]**

Ուսումնասիրության առարկան եղել են վերոհիշյալ ԶԼՄ-ներում 2023թ. հոկտեմբերի 1-ից հոկտեմբերի 15-ը եթեր հեռարձակված հիմնական լրատվական թողարկումները և առցանց լրատվամիջոցների հրապարակումները:

Դիտարկվել են այն նյութերը, որոնք վերաբերել են

- ***Արցախից բռնի տեղահանվածներին առնչվող պետական ծրագրերին,***
- ***տեղահանվածներին առնչվող տվյալներին,***
- ***տեղահանվածների բարձրացրած խնդիրներին,***
- ***մասնավոր ընկերությունների, քաղաքացիական նախաձեռնությունների, կամավորների կողմից իրականացվող աշխատանքներին:***

Հանրայինի հրապարակումների գերակշիռ մեծամասնությունը վերաբերել է Հայաստանի կառավարության կողմից իրականացվող աջակցության ծրագրերին, Հումանիտար կենտրոնից վարչապետի մամուլի քարտուղարի ուղիղ միացումներին, որոնց մասնակցել են ոլորտային պատասխանատուներ՝ նախարարներ, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ: Ամեն օր մանրամասն ներկայացվել են թվային տվյալները,

տեղահանվածներին ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգը, առողջապահական, կրթական, աշխատանքային իրավունքները և հնարավորությունները: Տեղահանման առաջին իսկ օրից ուղիղ միացումներ են եղել Գորիսից և Կոռնիձորից: Խոսվել է ադրբեջանցիների կողմից բռնի տեղահանվածներից վախի մթնոլորտում հարցազրույցներ կորզելու մասին, որով կարող է և պառակտում մտցվել հայ հասարակության մեջ, այդ մասին խոռսել են տեղեկատվական անվտանգության մասնագետները: Հարցվածների դեմքերը փակվել են: Հանրայինը բռնի տեղահանման առաջին օրերի տեսանյութերում երեխաների դեմքերն էլ է փակել:

Հանրայինն անդրադարձել է նաև իրավական հարցերին՝ ունեցվածքի իրավունքին, փախստականի կարգավիճակին: Ներկայացվել է նաև այլ երկրների և միջազգային կազմակերպությունների տրամադրած աջակցության մասին տեղեկատվություն: Բռնի տեղահանվածների սինխրոնները Առաջին ալիքով եղել են հիմնականում բարեկարգ միջավայրում, զրուցակիցները են եղել նորմալ տներում, սոցիալական կարիքների վրա շեշտադրումներ չեն եղել: Բացառությունը, թերևս, Արտաշատի մարզադպրոցում տեղավորված 120 արցախցիների կադրերն են եղել: Ընդհանուր առմամբ, տպավորությունն այն է, որ տեղահանված մարդկանց խոսքը շատ քիչ է ներկայացվել:

Կամավորների աշխատանքին անդրադարձ եղել է Սյունիքի մարզպետի հետ հարցազրույցի՝ Գորիսից արված ռեպորտաժում, իրենք՝ կամավորները կամ քաղաքացիական նախաձեռնությունների ներկայացուցիչներն անձամբ՝ եթերում գրեթե չեն եղել: Մարդկային պատմությունները նույնպես քիչ են եղել, բայց տպավորիչ՝ Նոր Ղազանչի գյուղից 91-ամյա Բաշիր Առուշանյանի պատմությունը, ընտանիքին մեքենայով Հայաստան տեղափոխած 12-ամյա Արենի մասին պատմությունը, փոքրիկ Լուսեի ծնունդը… Ընդհանուր առմամբ՝ Հանրային հեռուստատեսությունը տեղեկատվական իր գործառույթն իրականացրել է լիարժեքորեն:

«Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվականը նույնպես հաղորդել է պաշտոնական տեղեկատվություն, սակայն հիմնական շեշտ դրել է մարդկային պատմությունների ամենօրյա թողարկումների վրա, մարդիկ խոսել են իրենց պրոբլեմներից, կարիքներից, կորցրած հայրենիքից: Դրական, հուսադրող, լուսավոր նյութերի կողքին կան նաև ողբերգական, անմխիթար իրողություններ: Մեկը նշել է, որ դեղերի գումար չունի, մյուսը՝ որ երեխաներին մանկապարտեզ չեն ընդունում, տեղերը սահմանափակ են, մյուսը՝ որ երեխայի շորեր չունի, որ բազմազավակ ընտանիքը նկուղում է տեղավորվել, որ վարձակալման գները թանկ են, Ստեփանակերտում բենզինի պահեստի պայթյունից մահացած 5 երեխաների ծնողների թաղման տեսարանները, որտեղ 86-ամյա տատն ասում է, որ բարեկամներն են օգնում, պետական աջակցություն դեռ չեն ստացել… ընտանիքի 4 տղամարդկանց կորցրած կինը նույնպես տան վարձակալման բավարար գումար չունի…: «Արմենիայի» թողարկումներն առանձնանում են նաև նրանով, որ բռնի տեղահանվածների մասին պատմությունները ներկայացնելիս էկրանին ամբողջ ընթացքում դնում են հեռախոսահամար՝ տվյալ ընտանիքին օգնելու համար: Գրեթե ամեն օր անդրադարձ կա բռնի տեղահանված այն արցախցիների մասին, որոնք բուժումներ են ստանում տարբեր հիվանդանոցներում:

«Ժամ»-ի եթերում բարձրաձայնվել են մի շարք խնդիրներ, որոնք այլ ԶԼՄ-ներում բացակայում են. օրինակ՝ ծնողազուրկ դարձած երեխաների որդեգրման մասին, բնակարանների վարձակալման խարդախությունների մասին, հոգեբանական աջակցության հարցում պրոֆեսիոնալիզմի կարևորության մասին:

Բարեգործական նախաձեռնություններից խոսվել է «Կարաս» ընկերության կողմից օրական 1000 հոգու սննդի տրամադրման մասին, նշվել է «Օջախ» ընկերության ներդրումն այդ գործում: Կամավորական-բարեգործական աշխատանքի մասին մի մեծ ռեպորտաժ է պատրաստվել Անահիտ Սարդարյանի՝ Երևանի Տերյան 105 հասցեում գործող նախաձեռնության մասին:

«Երկիր Մեդիա» հեռուստաընկերության լրատվական հիմնական թողարկումներում Արցախին վերաբերող նյութերը հիմնականում քաղաքական են, անդրադարձներ են միջազգային ասպարեզում հարցի ներկայացումներին: Հանգամանալից ներկայացվել է Work for All հարթակը, որտեղ ամփոփված են ՀՀ-ում առկա թափուր աշխատատեղերը և դրանց դիմելու կարգը: Պետական աջակցության ծրագրերի մասին նյութերը հիմնականում ունեն շեշտադրում, որ դրանք բավարար չեն, չնայած կառավարության խոստումներին՝ ոմանց հենց իշխանությունների անգործությունն է թևաթափ անում: Մարդկային պատմությունները եթերում քիչ են, եղածներն էլ անհուսության ու ծանր իրավիճակի մասին են. 19 հոգով տեղավորվել են մեկ սենյականոց բնակարանում, երեխաների հետ վարձով տներ տալուց հաճախ խուսափում են…:

Հոկտեմբերի 10-ի լրատվականում, օրինակ, լրագրողն իր խոսքում ասում է. «Բռնի տեղահանվածներին օգնում են անհատները, միավորված հայերի խմբերը, կազմակերպությունները, բայց կան նաև այնպիսիք, որոնք արցախցիներին վերաբերվում են որպես օտարերկրացու»:

Մի առանձնահատկություն նշենք. «Երկիր Մեդիայի» առավոտյան «Բարև, Երկիր» հաղորդաշարը հայտարարել է, որ իրենք դառնում են հարթակ բռնի տեղահանված անձանց համար և նրանց հրավիրում են անձամբ խոսելու իրենց խնդիրների մասին:

Բարեգործական-կամավորական աշխատանքների մասին դիտարկված ժամանակահատվածում եղել է երեք նյութ. մեկը կապված է ՌԴ-ից նավթ և հումանիտար այլ օգնություն տրամադրելու և Կոպիրկինի այցելության հետ, մյուս ընդարձակ ռեպորտաժը եղել է Հայ Օգնության Միության աջակցության ծրագրերի, ավելի քան 200 կամավորների /այդ թվում արտասահմանցի/ նվիրված աշխատանքի մասին, և երրորդ նյութում Գորիսի փոխքաղաքապետ Իրինա Յոլյանը խոսում է Կարմիր խաչի կամավորների և գորիսցի դպրոցականների նվիրված աշխատանքի մասին:

Հայկական երկրորդ հեռուստաալիքում նույնպես հիմնականում գերակշռել են Արցախյան հիմնահարցի քաղաքական վերլուծությունները, միջազգային ասպարեզում դրան վերաբերող իրադարձությունների լուսաբանումը:

Բռնի տեղահանվածներին ցուցաբերվող պետական աջակցության մասին տեղեկատվությունում հիմնական ծրագրերը ներկայացվել են, խոսվել է հայաստանյան 15 տնտեսվարողների կողմից ստեղծված Move to Armenia հարթակի մասին:

Հ2-ում նաև քննադատական խոսք է հնչել ՀՀ կառավարության հասցեին: Մասնավորապես, հոկտեմբերի 3-ին «Հայելի» ակումբի հյուրը՝ Էդգար Ղազարյանն է ասել. «*Բռնի տեղահանվածների ընդունումն ու կացարաններով ապահովումը եղել է սխալ և անկազմակերպ: Պետությունը վաղուց պետք է գույքագրեր ազատ բնակֆոնդը և հնարավորինս բարեկարգեր: Մասնավոր մարդիկ են աջակցում, իսկ պետությունն իրեն է վերագրում: Իշխանությունն ամեն ինչ անում է արցախցիներին մայրաքաղաքից հեռու պահելու համար…*»:

Առցանց լրատվամիջոցներում նույնպես հրապարակումների գերակշիռ մեծամասնությունը վերաբերում է Հայաստանի կառավարության իրականացրած աջակցության ծրագրերին: Բռնի տեղահանվածներին առնչվող տվյալներն ու իրենց իսկ բարձրացրած խնդիրները լուսաբանվել են պակաս ինտենսիվությամբ: Ցանկը եզրափակում են կամավորների կողմից իրականացվող աշխատանքների անդրադարձները. վերոնշյալ առցանց լրատվամիջոցները, բացառությամբ մեկի, այդ թեմայով հատուկենտ հրապարակումներ ունեն:

«ՍիվիլՆեթ» լրատվամիջոցն իր հրապարակումներում բազմաթիվ անգամ անդրադարձել է տեղահանվածներին առնչվող պետական աջակցության ծրագրերին: Ամենից հաճախ դա արվել է պաշտոնական տեղեկատվության տեսքով. պարբերաբար հրապարակվել են կառավարության Հումանիտար կենտրոնի հեռարձակումները, օրինակ տեղահանված ուսուցիչներին հայաստանյան դպրոցներում աշխատանքի տեղավորման, ուսանողների դասապրոցեսի կազմակերպման և ուսման վարձի փոխհատուցման վերաբերյալ: Հրապարակվել է տեղահանվածներին տրամադրվող աջակցության վերաբերյալ տեղեկատվություն՝ մանրամասն քայլեր ընդգրկող ուղեցույցի տեսքով: Անդրադարձ է կատարվել նաև կառավարության նիստերի հեռարձակումներին՝ վերոնշյալ թեմաներով:

Հրապարակվել են նաև թվային տվյալներ պարունակող նյութեր, օրինակ, մարզերում տեղահանվածների բաշխվածության, երևանյան դպրոցներից մեկում աշխատանքի ընդունված արցախցի ուսուցիչների, դպրոց հաճախող արցախցի աշակերտների մասին:

«ՍիվիլՆեթը» բավականին շատ է անդրադարձել նաև տեղահանվածների բարձրացրած խնդիրներին, հաճախ՝ էմոցիոնալ մարդկային պատմությունների, ազդեցիկ ֆոտոշարքերի տեսքով: Բարձրաձայնած խնդիրները հիմնականում վերաբերել են տրամադրված կացարանների ոչ այնքան բարվոք պայմաններին, կենցաղային խնդիրներին, համապատասխան տների, անհրաժեշտ իրերի բացակայությանը, հոգեբանական խնդիրներին: Լուսաբանվել է տեղահանվածների բողոքն այն մասին, որ բանկերը բռնագանձում են 100.000-ական դրամ աջակցությունը՝ վարկերի դիմաց: Նյութը

ներկայացվել է կոնկրետ հերոսի օրինակով։ Խնդիրներ են բարձրացվել նաև «Արցախյան դիտանկյուն» հաղորդման շրջանակներում (օրինակ, արցախցի չինովնիկների աշխատավարձերին առնչվող թեման)։ Հաղորդումը արցախցի լրագրող Հայկ Ղազարյանն է վարում (ընդհանրապես, արցախցի թղթակիցները շարունակում են ակտիվորեն ներգրավված լինել լրագրողական նյութերի պատրաստման գործում)։

Կամավորների մասին առանձին նյութեր չկան։ Նրանց մասին համառոտ անդրադարձ կա, օրինակ, ԱԻՆ-ի՝ Սյունիքի տարածաշրջանի աշխատակիցներին առնչվող նյութում։ Մեկ տողով միայն անդրադարձել են նրանց աշխատանքին Գորիսում աշխատող մարդասիրական կազմակերպությունների մասին նյութում («Գործընկերության ուսուցում» ՀԿ, «Բժիշկներ առանց սահմանի» կազմակերպություն), որտեղ նշվել է, որ կամավորները սնունդ էին առաջարկում, այդ թվում՝ տարածքում աշխատող լրագրողներին։

«Ֆակտոր տեղեկատվական կենտրոնի» հրապարակած նյութերը, հիմնականում, չոր, պաշտոնական ինֆորմացիա են պարունակում, շատ են կառավարության Հումանիտար կենտրոնից հեռարձակումները, օրինակ, 100.000-ական դրամ միանվագ օգնության, կոմունալ ծախսերի փոխհատուցման, ուսուցիչների համար նախատեսված աջակցության ծրագրերի, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների ծառայություններից օգտվելու, ուսանողների դասապրոցեսի և ուսման վարձի փոխհատուցման վերաբերյալ։ Հրապարակվել է նաև պաշտոնական ինֆորմացիա՝ բանկային խնդիրների գույքագրման մասին, ինչպես նաև տեղահանված արցախցիներ համար նախատեսված օգտակար տեղեկատվություն, օրինակ՝ էլեկտրական գնացքներով անվճար երթևեկելու մասին։ Մեջբերում է արվել վարչապետ Փաշինյանի միկրոբլոգից՝ կառավարության տրամադրած շուրջ 100 միլիոն դոլարի վերաբերյալ։ Լուսաբանվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի ասուլիսը՝ տեղահանված գործարարների հետ իրականացվող ծրագրերի մասին։ Հրապարակվել է ԿԳՄՄՆ-ի շրջաբերականը՝ քոլեջների ուսանողների վերաբերյալ։

Թեպետ գերակշռում է «չոր» ինֆորմացիան, հրապարակվել են նաև մի շարք, այսպես կոչված, մարդկային պատմություններ։ Օրինակ, էմոցիոնալ տեսանյութ («Ողջ կյանքը մեկ ճամպրուկի մեջ»)՝ բռնի տեղահանված բազմազավակ ընտանիքի խնդիրների մասին (կենցաղային հարցեր, մահճակալների բացակայություն, առաջարկված սահմանամերձ գյուղում ապրելու ցանկության բացակայություն)։ Մեկ այլ տեսանյութի հերոս էլ բարձրաձայնում է բանկային քարտի հետ կապված խնդիրներ, նշում, որ պետությունից աջակցություն չի ստացել։ Ներկայացվել է նաև պատմություն 15-ամյա արցախցի աղջկա մասին, որը ցանկացել է Երևանում բժշկական քոլեջ ընդունվել, սակայն պարզել է, որ ընդունելությունն արդեն ավարտվել է։

Տեղահանվածներին հուզող խնդիրները բարձրաձայնվել են ոչ միայն սյուժեների միջոցով։ Օրինակ, արցախցիների ինտեգրման հոգեբանական ասպեկտներին առնչվող մի շարք խնդիրներ արծարծվել են հոգեբան Անուշ Ալեքսանյանի հետ հարցազրույցում։

Այս լրատվամիջոցը, ի տարբերություն մյուսների, ավելի շատ է անդրադարձել կամավորների աշխատանքին (օրինակ, Արտաշատի մարզադպրոցի տարածքում տեղավորված արցախցիների մասին տեսանյութերից մեկում կա կամավորի հետ հարցազրույց)։ Մեկ այլ տեսանյութում էլ լուսաբանվում է Գորիսում գործող մանկավարժ-կամավորների աշխատանքը։ Մանրամասն լուսաբանվել է դերասանուհի Անահիտ Սարդարյանի կամավորական նախաձեռնությունը, ներկայացվել է ոչ միայն աջակցությունից օգտվելու կարգը, այլև կամավորների մոտիվացիան, հարցազրույցներ են անցկացվել տարբեր տարիքի կամավորների հետ։

«A1+»-ում մեր դիտարկման օրերին /2023թ. հոկտեմբերի 1-15/ գերակշռել է կառավարության Հումանիտար կենտրոնից ստացված պաշտոնական տեղեկատվությունը (100.000-ական դրամ միանվագ աջակցություն, կոմունալ վճարներ և այլն)։ Կան նյութեր առողջապահության նախարարության ծրագրերի մասին (օրինակ, մոբիլ բժշկական թիմերի), որոնք նաև վիճակագրական տվյալներ են պարունակում։ Տեղահանվածների մասին թվային տվյալներ կան նաև Լոռու մարզում ապաստան գտած արցախցիների մասին նյութում, ինչպես նաև՝ Հումանիտար կենտրոնի ներկայացրած նյութերում (այս օրերին ծնված փոքրիկ արցախցիների մասին և այլն)։

Հատկանշական է, որ որ պաշտոնական տեղեկատվությունը, արցախցիների հիմնախնդիրների բարձրաձայնումն ու այդ խնդիրների լուծումը միախառնվում են մեկ տեսանյութում։ Օրինակ, այդպիսին է ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության և «Առաքելություն Հայաստան» կազմակերպության համագործակցության մասին նյութը, որը և՛ պետական-բարեգործական ծրագիր է ներկայացնում, և՛ բարձրացնում տեղահանված, անօգնական ծերերի խնդիրները, և՛ կոնկրետ «հերոսի» պատմություն ներկայացնում։

Ընդհանրապես, արցախցիների խնդիրները հիմնականում բարձրաձայնվել են կոնկրետ մարդկանց պատմությունների միջոցով։ Օրինակ, ապատիայի, անորոշության զգացման մասին խոսվում է Սյունիքում աշխատանքի անցած ուսուցիչների ու այդ մարզում արդեն դպրոց գնացող աշակերտների մասին նյութում։

«A1+»-ի մարդկային պատմություններից շատերը թեև խնդիրներ են բարձրաձայնում, սակայն նաև ցուցադրում են նոր բնակավայր գտած մարդկանց տոկունությունը և «առաջ գնալու» կամքը։ Օրինակ, Արցախի ջազ նվագախմբի մասին տեսանյութի հերոսները, ճիշտ է, խոսում են որոշ հոգեբանական խնդիրների մասին, բայց նաև նշում են, որ նվագելը միշտ օգնում է հաղթահարել դժվարությունները։ Նյութը դրական նրբերանգ էլ ունի, դիտելիս նույնիսկ ժպտում ես։ Այդպիսին է նաև Դեբետ գյուղում բնակվող մարտակերտցիների մասին նյութը, ինչպես նաև «հացի հերթի» հայտնի փոքրիկ տղայի մասին տեսանյութը և այլն։ Վերոհիշյալ նյութերում ներկայացված խնդիրները և՛ նյութական են (կենցաղային իրերի, տեխնիկայի, հագուստի պակաս), և՛ հոգեբանական,

սակայն շեշտադրվում են ո՛չ թե հիմնախնդիրները, այլ, ավելի շուտ, դրանք հաղթահարելու ձևերն ու պատրաստակամությունը:
Կամավորների աշխատանքը ներկայացնող նյութերը համեմատաբար քիչ են եղել:

«ԳալաTV» լրատվամիջոցը բռնի տեղահանման առաջին իսկ օրերից Գորիսից ու Կոռնիձորից ռեպորտաժներ է արել, ակտիվորեն լուսաբանել է թե՛ տեղահանված արցախցիներին ուղղված պետական ծրագրերը, թե կամավորական նախաձեռնությունները, և ողբերգական այդ օրերի մասին տպավորիչ մարդկային պատմություններ է հրապարակել: Լրատվամիջոցը նույնպես շատ է հրապարակել արցախցիներին ուղղված պետական ծրագրերին առնչվող նյութեր, ինչպես նաև պաշտոնական տվյալներ: Դրանք ներկայացվել են հիմնականում Հումանիտար կենտրոնի հեռարձակումների, կառավարության ներկայացուցիչների ու նախարարների ճեպազրույցների տեսքով: Կան արցախցիներին առնչվող օգտակար տեղեկատվություն պարունակող այլ նյութեր, օրինակ՝ Արդշինբանկի հայտարարությունը գրավադրված իրերի վերադարձի վերաբերյալ կամ Ստեփանակերտի քաղաքապետարանի հայտարարությունը գույքահարկի պարտավորությունների վերաբերյալ:

«Գալա TV»-ին մարդկային պատմություններում ներկայացրել է Ադրբեջանի ցեղասպանական գործողությունները հենց իրենց՝ ականատեսների աչքերով: Մարդիկ պատմել են տեղահանման սարսափների, հայրենազրկման ու կորստի ցավի մասին: Տպավորիչ են «Սկյուռիկ» մականունով անիմատոր, միջացառումների կազմակերպիչ Անիի մասին պատմությունը (աղջիկն այժմ Գյումրիում է ու փորձում է հասկանալ, թե ինչպես կարող է երբևէ վերականգնել իր գործունեությունը), մարտունեցի գինեկոլոգի մասին փոքրիկ նյութը, Վայքում ապաստան գտած արցախցիների հետ հարցազրույցները և այլն: Նյութերում ներկայացված արցախցիների բարձրացրած խնդիրները հիմնականում կենցաղային-նյութական են, մեկ դեպքում տեղահանվածներն իրենց դժգոհությունն են արտահայտում Արցախի կառավարությունից:
Լայնորեն լուսաբանվել է արտասահմանյան երկրների կառավարությունների և միջազգային մարդասիրական կազմակերպությունների կողմից բռնի տեղահանվածներին ուղղված աջակցությունը:

Լուսաբանվել է կամավորների աշխատանքը, որոնցից հատկապես տպավորվել է Գյումրիի Հայորդյաց տան դպրոցական կամավորների ակտիվ ու նվիրված աշխատանքի մասին պատմող նյութերը:

ԱՄՓՈՓԵԼՈՎ՝ կարող ենք ասել, որ բռնի տեղահանվածների խնդիրները դիտարկված լրատվամիջոցները լուսաբանել են հավուր պատշաճի, Հումանիտար կենտրոնի տեղեկատվական թողարկումները և դրանց մասին պատմող նյութերը հրապարակվել են բոլոր լրատվամիջոցներով:
ՀՀ կառավարության աջակցության ծրագրերի դրական լուսաբանման հիմնական խոսափողը հանրային հեռուստատեսությունն է եղել: «Արմենիան», «Երկիր Մեդիան» և «Հայկական երկրորդ հեռուստաալիքը» պետական աջակցության ծրագրերի մասին

նյութերում շեշտում են, որ դրանք բավարար չեն, որ մարդկանց տարրական կարիքները հնարավոր չի լինի բավարարել, եթե քաղաքացիական նախաձեռնությունների, կամավորների, անհատների աջակցությունը չլինի։
Ժանրային առումով խնդրի լուսաբանումը դիտարկված բոլոր լրատվամիջոցներում եղել է բազմազան՝ լրատվական «չոր» նյութերին հետ եղել են սոցիալական գովազդներ, որոնցում մանրամասն ներկայացվել են աջակցության ստացման հետ կապված քայլերը, հարցազրույցներ, ակնարկներ, «մարդկային պատմություններ», տեղերից ուղիղ եթերներով ներկայացվող ռեպորտաժներ…

Որոշ դեպքերում, մասնավորապես «Արմենիա» ՀԸ մարդկային պատմություններում խնդիրներ են եղել՝ կապված խոցելի իրավիճակում գտնվող անձանց հետ հարցազրույցների էթիկայի պահպանման հետ։

Համեմատաբար պակաս են եղել կամավորներին, քաղաքացիական աջակցության նախաձեռնություններին նվիրված նյութերը։ Քիչ է լուսաբանվել նաև արտասահմանյան երկրներից և միջազգային կազմակերպություններից ստացված օժանդակության մասին նյութերը։

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԼՄ-ՆԵՐԻՆ

- Տեղահանվածների խնդիրները լուսաբանելիս խստորեն հետևել լրագրողական էթիկայի կանոններին՝ հաշվի առնելով բռնի տեղահանվածների խոցելիությունն ու դժվար կացությունը։
- Տեղահանվածներին ցուցաբերվող աջակցության մասին գրելիս միշտ զգույշ լինել. խղճահարության փոխարեն մարդիկ հասկացված լինելու, ապրումակցման և արժանապատիվ կարեկցանքի կարիք ունեն։
- Հատկապես խոցելի են պատերազմական գործողությունների, բռնությունների ականատես երեխաները։ Ուստի անհրաժեշտ է լավ մտածել՝ նախքան նրանց հետ հարցազրույց անելը։ Հարցրեք ինքներդ ձեզ՝ արդյո՞ք անհրաժեշտ է երեխաներին նման հարցեր տալ, մեծահասակը կարո՞ղ է նույն պատասխանները տալ երեխայի փոխարեն։ Եթե այո, ուրեմն հանգիստ թողեք երեխաներին։
- Չբավարարվել միայն իրադարձային լրատվությամբ կամ արտակարգ իրավիճակների լուսաբանմամբ։
- Խուսափել «դժվար» թեմաները լղոզված, պարզունակ կամ կիսատ-պռատ ներկայացնելուց։
- Չսահմանափակվել միայն սոցիալ-տնտեսական թեմաները վերհանելով։ Սույն ծրագրի շրջանակում անցկացված հարցումները ցույց են տալիս, որ տեղահանված արցախցիների 99 տոկոսը դժգոհ է հայաստանյան լրատվամիջոցներում իրենց խնդիրների լուսաբանումից, շեշտելով, որ քաղաքական և իրավական հարցերը ստորադասված են, ԶԼՄ-ներն անդրադառնում են միայն տեղահանվածների կեցության, սննդի ու կենսական տարրական պայմաններ ունենալու խնդիրներին։
- Աջակցության ծրագրերի արդյունավետությունը դիտարկել և լուսաբանել դրանց հասցեականության և իրագործելիության տեսանկյունից։
- Տեղահանված արցախցիներին վերաբերող իրավական հարցերը լուսաբանելիս սերտորեն համագործակցել իրավապաշտպան կազմակերպությունների, մարդու իրավունքներով զբաղվող ՔՀԿ-ների հետ։
- Սերտորեն աշխատել Հայաստանում գործող արցախյան հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական ակտիվիստների հետ. հաճախ նրանք ավելի տեղեկացված են լինում, քան որոշ պաշտոնյաներ ու պետական կառույցների ներկայացուցիչներ։
- Լրջորեն աշխատել ՏԻՄ-երի հետ՝ նոր բնակավայրերում արցախցիների ինտեգրմանը նպաստող տեղեկատվական բովանդակության ստեղծման համար։
- Հետևողական լինել հրապարակումներից հետո տիրող իրավիճակի լուսաբանման հարցում, տեղեկանալ՝ արդյո՞ք ինչ-որ բան փոխվել է։
- Ակտիվ լինել արցախից տեղահանվածների մշակութային կյանքի լուսաբանման հարցում։ Մշակութային նախաձեռնություններն ինտեգրման լավագույն միջոցներից են, և դրանց լուսաբանումը հոգեկան բավարարվածության և լավատեսության ազդակներ կարող են դառնալ։
- Ավելի հաճախ անդրադառնալ բարեգործական-կամավորական աշխատանքներին, պատմել կամավորների մասին, ցույց տալ բարության, ապրումակցման ու համերաշխության օրինակներ։

- Հետևողականորեն լուսաբանել բռնի տեղահանված արցախցիներին ուղղված արտասահմանյան երկրների և միջազգային կազմակերպությունների աջակցությունը։

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(տվյալներն ընդգրկում են 2023թ. սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 26-ն ընկած ժամանակահատվածը)

26 Հոկտեմբերի 2023, 1864 - Ն
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 Հոկտեմբերի 2023, 1807 - Լ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 Հոկտեմբերի 2023, 1762 - Լ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՑ ՀԵՏՈ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ԿԱՄ ՄԱՄՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 Հոկտեմբերի 2023, 1763 - Լ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎԵԼՈՒ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3 Հոկտեմբերի 2023, 1675 - Լ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԴԵՄ ՍԱՆՁԱՋԵՐԾՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 հոկտեմբերի 2023

Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին 50 000 դրամ աջակցություն կտրվի առաջնային սպառողական ծախսերը հոգալու նպատակով

23 հոկտեմբերի 2023

Կառավարությունը 53 մլրդ դրամ է տրամադրել ԼՂ-ից բռնի տեղահանվածների աջակցության ծրագրերին

17 հոկտեմբերի 2023

Ներկայացվել է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերի ընթացքը

16 հոկտեմբերի 2023

Էկոնոմիկայի նախարարությունը ԼՂ-ից բռնի տեղահանված գործարարների համար ծրագրեր է իրականացնում

14 հոկտեմբերի 2023

Ներկայացվել են ՀՀ կառավարության կողմից իրականացվող ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց աջակցության ծրագրերը

12 հոկտեմբերի 2023

Հայաստանի կառավարությունը շարունակում է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց աջակցության ծրագրերը

8 հոկտեմբերի 2023

Կառավարությունը մշակում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների երկարատև զբաղվածության ծրագրեր

5 հոկտեմբերի 2023

Կառավարության որոշմամբ, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված յուրաքանչյուր անձի կտրամադրվի 100 000 դրամ միանվագ աջակցություն

3 հոկտեմբերի 2023

www.workforall.am կայքի միջոցով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք կարող են դիմել աշխատանքի համար

1 հոկտեմբերի 2023

Լեռնային Ղարաբաղից տեղահանված յուրաքանչյուր անձի համար կտրամադրվի 40.000 դրամ բնակարանի վարձակալության և 10.000 դրամ կոմունալ ծախսերի նպատակով

25 սեպտեմբերի 2023

ԼՂ–ից բռնի տեղահանվածների համար գործարկվում է «Սոցիալական աջակցության ծառայությունների քարտեզը»՝ map.socservice.am